

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՍԻՐԱՅԻՆ ՊՈՆՄՆԵՐԸ

Բանաստեղծական տաղանդի շափը որոշող կարևոր տվյալներից մեկը ընդհանրացման ուժն է։ Բայց «ընդհանրացման ուժին» անպայման չպետք է կցել «էպիկական» ածականը։ Պատմողական, քնարական, կամ էլ խոհական-փիլիսոփայական պոեմ գրելը թելադրվում է ժամանակից, ինչպես և նախասիրության հարց է, ուստի չի կարելի զրանցից մեկն ու մեկին առաջնություն տալով առաջարկել բանաստեղծին։ Այս իմաստով էլ պետք է ասել, որ Պ. Սևակի «բանաստեղծական տաղանդի շափը որոշող կարևոր տվյալներից մեկին» պոեմների, ընդհանրացման ուժը մեծ է, թեև այն բնավ էլ էպիկական չէ։ Ապացույց՝ «Անլուծի զանգակատունը», որն իր գոյություն փաստով հաստատումն է խոհական-փիլիսոփայական պոեմի «ընդհանրացման մեծ ուժին» կարելիությանը։ Բայց այս հոգվածում մենք կխոսենք միմիայն Պ. Սևակի սիրային պոեմների մասին, որոնք էպիկական չլինելով հանդերձ, ընդհանրացման պակաս ուժ չունեն։ Պարույր Սևակն ունի սիրո թեմայով գրված երեք պոեմ՝ «Երգ երգոց», «Ուշացած իմ սեր» և «Նահանջ երգով»։

Հին հրեական բանաստեղծության սքանչելի կոթողը՝ Սողոմոն իմաստունի «Երգ երգոց»-ը բազմիցս է ներշնչման աղբյուր դարձել ամենատարբեր ազգերի բանաստեղծների և արձակագիրների համար։ Ոչ միայն հրեա Շուլում Ալեյխեմն է իր երկը կոչել «Երգ-երգոց», այլև անդլիցի Հազգարդը վեպ է գրել Սողոմոն թագավորի հանքերի մասին. ոուս գրող Ա. Կուպրինը «Սուլամիթ» է անվանել իր փոքրիկ վեպը, որը նվիրված է Սողոմոն թագավորի կյանքին (Այս գիրքը բնագրից հայերեն է թարգմանվել Կ. Պոլսում, 1922 թ. «Կաշեն գրատան» հրատարակության կողմից)։

Հայ գրականության մեջ էլ «երգ երգոցը» մեկնաբանության իր տրագիցիան ունի։ Գրիգոր Նարեկացին, օրինակ, գրում է իր «Մեկնություն երգոց-երգոյն Սողոմոնի» գիրքը, նպատակ ունենալով այն մատչելի դարձնել «Աստվածաշնչի» հազարավոր հավատացյալներին։ Պ. Սևակը «Երգ երգոց» է անվանում իր սիրո պոեմը, այս անգամ արդեն ոչ թե Նարեկացու նման մեկնաբանելու, այլ այն իր ձևով վերաշինելու, վերաստեղծելու միտումով։

Եթե «Անլուծի զանգակատուն» պոեմում անցյալի թեմատիկան Պ. Սևակը կարողացել է արդիականացնել, ապա «Երգ երգոց»-ի մեջ, ընդհակառակը, ամենաժամանակակից և ամենասովորական թեմայի միջոցով թափանցել է անցյալի խորքը, մոտեցել, ինչպես ինքը կասեր, ռեալիզմի նախահիմքերին և պայքարել «հանուն և ընդդեմ» այդ հիմքերի։ Հանուն՝ որովհետև այս պոեմը գրված է զարմանալի պարզությամբ, անկեղծությամբ, անմիջականությամբ, և ընդդեմ, որովհետև բանաստեղծը սարսափահար փախել է հեքիաթայնությունից, պարզունակությունից, ամեն ինչ մինչև վերջ պատմելու ձանձրալի նկարագրողականությունից։

Ինչպես միշտ, այս անգամ էլ բանաստեղծը հաղորդակցվում է ընթերցողների հետ իր միակ քնարական հերոսի միջոցով։ Առաջին դեմքով խոսելը ոչ միայն եղելության պատրանք է ստեղծում, այլև զարմանալի անկեղծ է դարձնում բանաստեղծի խոսքը, հերոսի մարդկային մեծ ու խորունկ զգացումները։

Օ Սուլ...

Սուլամի...

Օ Սուլամի՜թա...

Քո բիրլիական անունն եմ սիրում

Սիրում եմ, այն էլ բիրլիական՝ սիրով.

Բիրլիական Սողոմոնի պես բանաստեղծի քնարական հերոսն էլ սիրուց խանդակաթ է դարձել։ Կազգուրիչ գինին էլ չի փրկում նրան, քանի որ զրուրդը հնձանում եռացող գինուն՝ իր սիրուհուն է ձգտում նա։ Մարմնական մերձեցման ձգտումը շոշափելու աստիճան ակնառու է պոեմում։

նույնիսկ այն դեպքում, երբ նրա քնարական հերոսը «դրախտային խնձորն» արդեն կերած է համարում, չի թաքցնում, որ ոչ մի տեղ՝

Այնքան չեմ զգում իմ դոյությունը,
Որքան քո գրկում:

Որքան էլ մարմնական, բայց տարփանքից հեռու, մեծ ու վեհաշունչ, ազնվացնող սիրո մասին է բանաստեղծի խոսքը: Այդ սերը, սակայն, նա չի որոնում հեռունեքում, այն իր կողքին է, իր գորշ քաղաքի բազմահարկ շենքի նեղլիկ խցիկում:

Սևակը չի ուղում ներկայացնել սիրած կնոջ մարմնական գեղեցկությունը՝

Գեղեցիկ ես դու, ինչպես բոլորը,
Որոնց սիրում են...:

Բայց չի էլ կարողանում խուսափել դրանից: Անհնարին է չզգալ այդ գեղեցկությունը, կամ էլ զգալով՝ չարտահայտվել:

Պոեմում բանաստեղծն ամբողջ ձայնով փառաբանում է սիրո ազնվացնող ուժը: Սերն է միայն, որ կարող է այդպես նրբացնել մարդու զգացմունքները, երազներով, սպասումներով ու հաճելի տապանակներով լցնել նրա հոգին:

Ես այլ բան չէի,
Քան թե ապակի,
Որ թափանցիկ է — լույսը չի բեկում:
Եկար ու դարձար նրան ամուլգամ:

Իսկ երբ չկա այդ սերը, նա հայելուց նորից ապակի է դառնում, լույսը չբեկող ապակի: Հեղինակը հավասար ուժով է բացահայտել և՛ սիրահար մարդու հոգու հուզումնալից աշխարհը, և՛ փոխադարձաբար չսիրված մնալու տազնապը, և՛ կարոտը, անսահման կարոտը, երբ արդեն հեռու է սիրած մարդուց: Սիրո վաղնջական թեման Պ. Սևակի մոտ հնչում է բոլորովին ինքնատիպ ու յուրօրինակ: Նրա քնարական հերոսը սիրո ուրիշ տվյալտանքներ էլ է ապրել, սիրել է և ուրիշներին, կամ թվացել է, թե սիրել է: Այդ բոլոր սերերը իրար ռե նման էին և նման չէին, ինչպես աշխարհի մեծ քաղաքները: Բայց ահա քնարական հերոսին այցելում է անդառնալիորեն մեծ սերը, տարբերվող ու ճակատագրական, որ Սևակի պատկերավոր արտահայտությամբ եկավ

Եվ ծննդավայր դարձավ ինձ համար:

Դա իրոք այն սերն է, որ մեծատառով է գրվում: Իսկ այդ մեծատառ Սերը ոչ այլ ինչ է, եթե ոչ հավերժացումը մարդկային ամենագեղեցիկ զգացումի: Սերը անմահ է, սերը հավերժական է,

Ինչպես անմահ է կրակն աշխարհում:
Այստեղ կհանգչի,
Կվառվի՝ այլուր:

«Երգ երգոց» պոեմում բազմազան ու յուրովի է պատկերային համակարգը: Պոեմի հերոսուհու քնարական կերպարը մասնավորապես թելադրել է պատկերային համակարգի բիբլիական շունչը: Բանաստեղծն ինքն էլ շատ է ձգտել հարազատ մնալ բիբլիական «Երգ երգոց»-ին: Դրա համար նա ոչ միայն ստեղծել է գեղեցիկ նմանություններ ու հակադրություններ, այլև իր պոեմում ինչ-որ տեղից շարունակել, կամ լրացրել է «Երգ երգոց»-ի միտքը, կրկնել ծանոթ պատկերները: Բոլոր դեպքերում բանաստեղծը նպատակ է ունեցել պահպանել այդ գեղեցիկ կոթողի պատերի ավանդական շարվածքը, թեև ուրիշ են իր «Երգ երգոց»-ի քարերը և այդ քարերի զարդաքանդակները: Համեմատության համար բերենք մի քանի օրինակներ: Այսպես՝ բիբլիական «Երգ երգոց»-ում մենք կարդում ենք.

«Իմ անկողնի մեջ գիշերը ես որոնեցի իմ հոգիի սիրածին, ես որոնեցի նրան, բայց չգտա:
Վեր կենամ, շուռ գամ քաղաքում, փողոցներումս ու հրապարակներումը, որոնեմ իմ հոգիի

սիրածին: Նորան որոնեցի, բայց չգտայ» (էջ 571):

Սևակի մոտ՝

Ողջ գիշերն ի լույս իմ մահճակալին
Փնտրում եմ նրան, չեմ գտնում սակայն:
Ողջ ցերեկն ի բուն իմ նեղ սենյակում
Կանչում եմ նրան և ձայն չի տալիս:

Կամ՝

«Պարանոցդ նման է Դավիթի աշտարակին, զինարանի համար շինած, որ հազար ասպար
կան կախված» (էջ 752):

Սևակի մոտ՝

Քո պարանոցը՝
Ազնիվ մարմարե մի վեհ աշտարակ,
Որոնցից—դարեր—մարդիկ են կախվել
Ինձ նմանները...

էլ չենք խոսում այն հատվածների մասին, որ Սևակը որպես բնաբան ընտրել է գլուխներից
յուրաքանչյուրի համար, և այդ հատվածների նմանությունը էլ իր բանաստեղծական պատկեր-
ները ստեղծել:

Նմանության միտումով Սևակը ստեղծել է նաև հակադրություններ:

Օրինակ. բիրիլական «Երգ երգոց»-ում մի քանի անգամ կրկնվող «Ով Երուսաղեմի աղջ-
կերք»-ին մեր բանաստեղծը հակադրում է նորից մի քանի անգամ կրկնվող «Երուսաղեմում
երբևէ չեղած աղջիկներ խարտյաշ»-ը և շարունակում պոեմը՝ նորից պահանջելով նմանությունը.

«Երգ երգոց»-ում՝

«Երգում եմ տալիս ձեզ, ով Երուսաղեմի աղջկերք, եթե գտնեք իմ սիրեկանին, ի՞նչ էք
ասելու նորան, ասեցեք թե սիրով հիվանդ եմ ես» (էջ 753):

Սևակի մոտ՝

Երուսաղեմում երբևէ չեղած խարտյաշ աղջիկներ,
Թե պատահաբար հանդիպեք նրան՝
Երուսաղեմի թխահեր դստեր,
Ի՞նչ պիտի ասեք:
Երգվեցնում եմ ձեզ, ասացեք նրան,
Որ ես հիվանդ եմ կարեվեր սիրով:

Այս և նման հակադրություններով Սևակը ոչ միայն ձգտել է նմանության, այլև միջավայր է
ստեղծել, ժամանակաշրջան: Չէ՞ որ ինքը գործ ունի «Երուսաղեմում երբևէ չեղած» հյուսիսի
դստեր հետ: Դարեր են ընկած իր, իր Սուլամիթայի և «խաղողի այգիին աղքատիկ աղջկան ու
մեծ արքայի» միջև: Բայց հոգևոր մեծ զգացումը մնացել է նույնը, որովհետև «հզոր է սէրը ինչ-
պես մահ, որովհետև յուրաքանչյուր սիրող կին թագուհի մըն է, որովհետև զեղեցկագույն է
սէրը»¹:

Ահա թե ինչու բանաստեղծն իրեն արքա է համարում ոչ նրա համար, որ կարող է
«Երգ երգոց» թողնել, այլ որ զիտի սիրելի: Անմեղ է այդ սերը, մեղսական: Եվ այս, և այն, որով
հետև պոեմում իրական վայելքներին խոսնված է հոգևոր հանձման զգացումը, երազայինին՝
կյանքը, զգացմունքին՝ աննենգ կիրքը:

Բայց միայն նմանությունների ու հակադրությունների միջոցով չէ, որ Սևակը վերաստեղծել
է «Երգ երգոց»-ը: Իր պոեմի որոշ մասեր նա սլարդապես այնպես է սկսում, որ լրացում կամ
շարունակություն են դառնում «Երգ երգոց»-ի, հիշեցումը՝ նրա այս կամ այն հատվածի: Օրինակ
Սևակը գրում է.

Օ Սուլամիթա, բաց արա դուռդ:
Իս բեզ շեմ փնտրել, քեզ շեմ որոնել,
Չեմ է: հարցրել ես պահակներից
Քո՝
Իմ շունեցած շիմացած հասցեն:

1 Ա. Կ ու պ ռ ի ն, Սուլամիթ, Կոստանդնուպոլիս, 1922:

Ի՞նչ պահակների մասին է խոսքը: Ընթերցողն անմիջապես հիշում է «Երգ Երգոց»-ի սիրահարին, որ շրջելով փողոցում հարցնում է «պարիսպների պահապանին» թիմ հոգիի սիրածին տեսե՞լ եք»: Կամ՝ երբ Սևակը գրում է՝

Նո այգի շունեմ,
Որ հիմա քեզ պես գալար վազերից
Կողերիդ համար մահիճ պատրաստեմ,

Նորից ես հիշում, որ Սողոմոնն իր Սուլամիթին այգի է կանչում, «Լիրանանի փայտերից» է մահիճ պատրաստում և այլն:

Նմանության ձգտելով հանդերձ բանաստեղծը զարմանալի կերպով կարողացել է տարբեր լինել և ի՞նչ «Երգ Երգոց»-ը ստեղծել:

«Ուշացած իմ սեր» պոեմում Պ. Սևակը արժարժում է սիրո ու ամուսնության հարցերը և արտահայտում հոգեբանորեն շատ բարդ ու վիճարկելի խնդրի լուծման իր տեսակետը: Պոեմը հրապարակվել է չորս անգամ և կնքվել չորս տարբեր անուններով. «Դժվար խոսակցություն», «Ես ևս այդ մասին», «Ո՞վ է մեղավոր» և «Ուշացած իմ սեր»:

«Դժվար խոսակցություն»-ը առաջին անգամ տպագրվում է «Նովիյ միր» ամսագրի 1956 թ. № 6-ում, Եվտուշենկոյի թարգմանությամբ: Պոեմի մի ուրիշ տարբերակ՝ վերափոխումներով ու կրճատումներով հրապարակվում է մեկ տարի հետո «Սովետական գրականություն» ամսագրի 1957 թ. № 3-ում: Պոեմի շուրջը ծավալված բանավեճերից և քննադատական դիտողություններից հետո հեղինակը լրջորեն մշակում է պոեմը, կատարում անհրաժեշտ կրճատումներ: Մեր խոսքն այժմ այս վերամշակված տարբերակի մասին է, որ «Մարդը ափի մեջ» ժողովածուի մեջ է մտել «Ուշացած իմ սեր» վերնագրով:

Պոեմի հերոսը ամենախորունկ սիրով սիրում է մեկին, որը, սակայն, ամուսնացած է և ունի երեխա: Ամուսնությունը կատարվել է առանց սիրո: Մնողները «մարդու են տվել» աղքատ «զավակի հետ մի լավ գերդաստանի», որի «յոթը պորտին» ճանաչել են, ճանաչել են.

Սակայն նրա գերդաստանին,
Բայց ոչ նրան, ում դու
Գնացել ես մարդու:

Հերոսի զգացումներն անպատասխան չեն: Սերը «վրժխնդիր» է եղել, վրժ է լուծել իրեն անտեսելու համար ու «տառապալից սիրով զինել» նաև պոեմի քնարական հերոսուհուն:

Նրանց փոխադարձ զգացմունքները, սակայն, պատնեշված են. առկա է սիրած կնոջ ամուսնության փաստը, և հենց այդտեղ է, որ հերոսը ցանկանում է ճեղքել պատնեշը և... դեմ է առնում հասարակական կարծիքին:

Ժողովի քննարկման նյութ են դառնում մարդու հոգին, նրա ապրումներն ու զգացմունքները:

— Զսիրել,— բանաստեղծի կողմից դրված կախման երեք կետերով ազդարարվում է ժողովի վճիռը:

— Զսիրել,— խոստանում է և հերոսը: Խոստանում է: Բայց խոստումներով են ատում ու սիրում: Հենց այստեղից էլ սկսվում է պոեմի հոգեբանական բախումը: Բանաստեղծը տառացիորեն ղգում է, որ գործ ունի մարդու հետ, «ամենամարդ» մարդու, «սիրո դ» մարդու, ուստի անշափ նրբորեն է մոտենում հարցին, ապրում իր հերոսի հոգեբանությամբ, զգում նրան խորապես:

Բայց ահա այդ սիրո դեմ ամբողջ հասակով ծառանում են շրջապատը, ժողովը, «բարոյական» օրենքները... Ի՞նչ անել: Բանաստեղծը դիմում է բանականությանը, որը նրան թելադրում է՝

Բոլոր օրենքները նրա համար են լոկ,
Որ պաշտպանեն կյանքում մարդկայինը,
Մարդուն...

Ընթերցողը խորապես հավատում է հերոսի զգացմունքներին, մեծությանն ու անկեղծությանը. դիտի, որ գործ ունի ոչ թե մարդկանց «թաքուն կապի», այլ «մեծ սիրո ու սրտի հետ»:

Հերոսը չի կարողանում հաշտվել այն մտքին, որ իր սիրած կինը ուրիշին է պատկանում:

նվ այդ ուրիշը, իրոք, որ ուրիշ ու օտար է նրա համար: Ահա թե ինչու նա չի ցանկանում, որ սիրած կինը «լավ ընտանիք» խաղա հանուն «ըն-տա-նե-կան սուրբ մաքրության»:

Պոեմը վերջանում է սիրո հաղթանակով:

Այս պոեմի առաջին տարբերակը «Նովիյ միր» ամսագրում հրապարակվելուց հետո նրա շուրջը մեծ բանավեճ սկսվեց միութենական մամուլում և հանդեսներում: Գրախոսներից ոմանք դատապարտում էին հեղինակին անբարոյականության ջատագովության և վտանգավոր բարոյա-խոսության համար, մյուսները պնդում էին, որ դա մարդկային ճշմարիտ զգացմունքների ար-ձագանք է: Նույն «Նովիյ միր» ամսագրում (1956 թ., № 10) «Երկու նամակ» խորագրի տակ տպագրվեցին Վ. Ռեբրինի «Խոսակցություն սիրո մասին» և Վ. Գերասիմովայի «Դժվար խոսակ-ցությունը շարունակվում է» հոդվածները: Ռեբրինը հեղինակին մեղադրում էր քաղթենիական անզուսպ եսասիրության մեջ, այն կարծիքը հայտնում, որ մարդկային նորմալ զգացմունքների տեղ պոեմում իշխում է սեռական հակումը և այլն: Մինչդեռ Վ. Գերասիմովայի կարծիքով, պոե-մում խոսքը իսկական սիրո, մեծ և ճշմարիտ սիրո մասին է: Նա արդարացնում էր պոեմի հերո-սուհու քայլը, որ թեպետ ուշացումով, բայց նորից ձգտում է իսկական սիրո, ցանկանում ստեղծել իսկական ընտանիք: Շատ շանցած «Կոմունիստ» ամսագրում հանդես եկավ Ն. Շամոտան² և հայտարարեց, թե Վ. Ռեբրինն ու Վ. Գերասիմովան շեն ընկալել պոեմի իսկական գաղափարը, բանավեճի են մտել երկրորդական հարցերի շուրջը, անտեսելով հիմնականը՝ կոլեկտիվին հա-կադրված անհատի հարցը: Նա պոեմի հերոսին անվանեց ինքնասիրահար ու անհատապաշտ մի քաղթենի, որը չգիտես ինչու բարբաջում է բարոյականության անունից: Պոեմին անդրադարձավ նաև Ա. Կիրևան³ «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում:

Իտալական ու ամերիկյան պարբերականները, նույնպես, արձագանքեցին այդ բանավեճին, իսկ հետազայում ամերիկացի Ինդուսթրիալ բանավեճի նյութերը ամփոփեց զրքում: Երբ այս պոեմը 1956 թ. «Ես ևս այդ մասին» վերնագրով հրապարակվեց ռուսերեն լեզվով լույս տեսած ժողովա-ժուում, նորից սկսվեց կարծիքների փոխանակումը: Պոեմի մասին իրենց դրական ու բացասական կարծիքներով հանդես եկան Յու. Սուրովցևը, Մ. Իվանովան, իսկ հայ գրականագետներից նրան անդրադարձավ Ս. Սողոմոնյանը իր «Արդի պոեզիայի մի քանի հարցեր» զրքում: Ս. Սողոմոն-յանի կարծիքով պոեմի բարոյականությունը արտահայտվում է նրանում, որ մարմնական կրքե-րին գերի դարձած կինը հարադատ երեխայից հրաժարվում է հանուն սիրեկանի: Նա Սեակի ստեղ-ձագործական մեթոդը համարում է սայթաքուն, թեման հնացած, իսկ ողջ պոեմը՝ ինքներգու-թյուն: Այդ բոլորով հանդերձ նա դեմ է Ն. Շամոտայի այն կարծիքին, որ պոեմի հիմնական հարցը կոլեկտիվի և նրան հակադրված անհատի փոխհարաբերության հարցն է:

«Ուշացած իմ սեր» պոեմի մեջ կա ճշմարիտ մի նպատակադրում, մի շատ զեղեցիկ զգա-ցում, որ նախորդ տարբերակներում հեղինակը խլացրել էր իրար հետևից գումարվող երեք ժո-ղովների աղմուկում: Պոեմը վերամշակելուց հետո ազատվել է ավելորդություններից, դարձել անձնական, իսկ նրա հերոսի ապրումներն ու մտորումներն արդեն պատճառաբանված և հասա-րակայնորեն արդարացված: Առաջին տարբերակում, Սողոմոնյանի խոսքերով ասած, կա մի «տարօրինակ տրամաբանություն», երբ խոսում են սիրած կնոջ ամուսնու մասին, ասում, որ նա հոգի մարդ է, հերոսը ջղաձգվում է:

Այո,

նա լավն է

Իսկ ես վա՛տն եմ...

Հատու և անզուսպ ասված այս բառերի մեջ էլ կորչում է հերոսի ասելիքը, դառնում սբարոյ-յական ոչ մի օրենքի չդիմացող ինքնատեստացիա: Սակայն ներքին մի հավատով զգում ես, որ այդպես չի ցանկացել ասել բանաստեղծը, որ պարզապես իրենց տեղը կորցրած բառեր են եկել, հանգրվանել այստեղ, որ ուրիշ բան էր ուզում ասել նա, ուրիշ ձևով էր ուզում ասել և ահա վերամշակումից հետո գտնում է նա այդ ձևը, որ

Գուցե վատ չէ այնքան,

Գուցե լավն է անդամ,

Բայց քեզ համար օտա՛ր-ուրի՛շ է նա:

² Н. Шамота, Человек в коллективе, «Коммунист», 1957, № 5, стр. 75—87.

³ А. Кирева, Нелегкий разговор, «Комсомольская правда», 3 ноября 1956 г.

Առաջին տարբերակում հերոսի շրջապատում բանաստեղծը բոլորին ներկայացրել է որպես քաղքենիներ, ասպարեզը թողնելով միայն բարոյական բարձր գաղափարներին բարբաջող իր հերոս անհատին։ Չբոսանքի դուրս եկած հերոսը, իրոք, այդիններում հանդիպում է միայն կանանց, որոնցով՝

Հիանալ ես ուղում, ուրիշ ոչինչ...
Կանայք՝ նման դռան, որ չեն փակվում,
Կողպեք բաց անելու ոչ մի հակում։

Շատ դիպուկ են նկատել. «Եվ պարծանք է համարում, որ չի գայթակղվում զբոսայգու գրի-գետուհիներով»։ Մինչդեռ վերամշակված տարբերակում այս քաղքենիների մոտ երևում են «Եվ աղջիկներ, աչքերն այնպես վճիտ, և աղջիկներ բազում՝ այնպես նաղուն, նաղուկ»։ Իսկ դա ոչ միայն միջավայր է ստեղծում, այլև նպատակ, ազնվության լույս սփռում հերոսի զգացմունքների վրա, իսկ նրա սիրուհուն դարձնում սովորական, առօրեական մի կին, որին ինքը սիրում է, և ոչ թե միջավայրից հեռու կանգնած մի եզակի անհատ։

Պոեմի հերոսի քաղքենիությունն ու անբեկությունը ցույց տալու համար, Սողոմոնյանը նշում է, որ շրջապատը, մարդիկ նրան բարեկամական խորհուրդ են տալիս ձեռք քաշել ամուսին և երեխա ունեցող կնոջից, ներս չթափանցել ուրիշի գործերի մեջ, սեփական երջանկությունը շորոնել ուրիշի ընտանեկան դժբախտության փլատակներում և այլն, իսկ նա, իբրև, «ուռլում է, փշերը ցցում ու ֆշշացնում, թե՛ ինձ պետք չեն նման իմաստությունները»։ Իր միտքը հաստատելու համար նա պոեմից բերում է հետևյալ տողերը.

Չէ, նման խորհուրդ մեզ համար չէ,
Մեր աշխարհին նման ու հարմար չէ։

Նախ հերոսի բերանով ասված այս խոսքերը բոլորովին էլ ամուսնացած կնոջից ձեռք քաշելու և ուրիշի ընտանեկան գործերին չմիջամտելու խորհրդին չեն վերաբերում, այլ վերաբերում են այն բանին միայն, որ՝

Ովքեր կեսլրջորեն ու կեսկատակ
Վաղը մեր նմանին խորհուրդ կտան.
— «Կարելի է անշուշտ,
Մարդը մարդ է, քար չէ...

Իսկ ինչու՞ նման խորհուրդը իրենց համար չէ, կամ, արդյոք, իրենց համար չէ։ Սևակը պոեմի առաջին տարբերակում այդ մասին լուր է, իսկ վերջինում արդեն որոշակիորեն հայտարարում.

Թեկուզ նրա համար մեզ հարմար չէ,
Մեր աշխարհին նման ու հարմար չէ,
Որ նա մեր աշխարհն է։

Մեր կարծիքով ճիշտ չէ նաև պոեմի ամբողջ բովանդակությունը միակ կերպարի խորհրդածությունների միջոցով շարադրելու երևույթը համարել «սայթաքուն մեթոդ, որից շատ հեշտությամբ մարդիկ ընկնում են գեղեցիկ ինքնախաբեության գայթակղիչ աշխարհը»։

Պոեմի «սեն ու սպիտակը» ջոկելու համար բոլորովին էլ պարտադիր չէ, որ հեղինակը ձայն տար նաև ուրիշներին, կամ էլ որևէ շահով նրանց ներկայացնեի իրենց գործերով։

Կարևորը պոեմի սյուժետային կամ ոչ սյուժետային լինելու հարցը չէ, և ոչ էլ այն, թե մեկ կերպար է գործում այնտեղ, թե ավելին։ Կարևորն այն է, որ պոեմը հնչի ռեալիստական ճշմարտացիության ուժով, տիպական լինեն հերոսին (ոչ անպայման հերոսներին) շրջապատող հանդամանքները, եզրահանգումները բխեցվեն հենց այդ հանգամանքներից և ոչ թե լինեն մտացածին։ Սևակի պոեմին բնորոշ է այդ ճշմարտացիությունը։ Դրա շնորհիվ էլ, կարգալուծ այս պոեմը (և ընդհանրապես նրա ստեղծագործությունները) թվում է, թե չես կարող անտարբեր լինել նրա քնարական հերոսի բախտի հանդեպ, չես կարող չբաժանել նրա ապրումները, Այդ մտերմությունը

մի տեսակ պարտավորեցնում է: Հենց այստեղ է, որ բանաստեղծի և ընթերցողի զգացմունքները ներդաշնակվում են միմյանց, մտերմությունը դառնում է հավատ: «Ուշացած իմ սեր» պոեմում, իրոք, առկա է այդ հավատը: Հավատում ես հերոսի զգացմունքներին, հավատում ես նրա ապրումներին ու տառապանքներին:

Բանաստեղծը այն խորը համոզմանը լինելով, որ ընտանիքի գոյության հիմնական նախապայմանը սերն է, կարողանում է արդարացնել սիրած կնոջ վերադարձը: Նա շատ լավ գիտի նաև, որ մի հարկի տակ կարելի է լսարձել և առանց սիրո, բայց այստեղ, պոեմում, խոսքը վերաբերում է իսկական ընտանիքին և ոչ թե «լավ ընտանիք» խաղալուն: Ու որքան պատճառաբանված է գրում հեղինակը.

Եվ դու պարտավոր ես փրկել մի ընտանիք:
Որ շատ վաղուց արդեն կործանվել է ինքը,
Հանուն կործանվածի կործանումի մատնել
Ուրիշ մի ընտանիք:

Մի՞թե ճշմարտություն չէ սա: Սիրած տղամարդու մոտ վերադարձող կնոջն այս անգամ արդեն բնավ չի կաշում «անբարոյական» պիտակը:

Այստեղ մարդիկ պործ ունեն միայն մեծ սիրո և իսկական զգացմունքների հետ:

Ոչ թե թաքուն կապի,
Նս գործ ունեմ միայն սիրո ու սրտի հետ...

Պոեմի քնարական հերոսուհին բնավ էլ թեթև հաճույքների համար չէ, որ լքում է ընտանիքը, նրա մեջ ոչ թե կիրքն է խոսում, այլ զգացմունքը, սեփական համոզմունքը: Երկուսն էլ տենչում են իսկական սիրո, զգացմունքների անխառն ներդաշնակության, իսկ այդ ձգտումների ճանապարհին կանգնած է մի ընտանիք, մի հարկ, ուր կարելի է միայն խաղալ

Թե սրա պես լավ հարկ չկա,

Երեխայի գոյության հանդամանքն էլ անգոր է մեղմացնելու, կամ ավելի ճիշտ, զսպելու նրանց զգացմունքները: Ինչպես նշեցինք, Սողոմոնյանը ժամանակին է նկատել, որ հեղինակի մտքով չի էլ անցել գրիչ վերցնել, պոեմ գրել՝ նպատակ ունենալով պոեմի հերոսին հակադրել իր շրջապատին, իր կոլեկտիվին: Կոլեկտիվի և անհատի փոխհարաբերության հարցը այստեղ հենված է մարդկային ամենանուրբ զգացմունքների վրա ու հեղինակը նման նուրբ հարցում բողոքում է ամեն մի կոպիտ միջամտության դեմ: Մարդիկ միջամտում են ամենասուրբ զգացմունքներին ու որոշման նման մի բան պարտադրում հերոսին՝ չսիրել: Դե, նա էլ խոսք է տալիս չսիրել: Կարծես ժողովը վատ չի վերջանում: Պաշտպանվում է մի ընտանիքի պատիվ, ամեն ինչ արվում է այդ ընտանիքը կործանումից փրկելու համար, իսկ սիրող մարդուն ստիպում են այլևս չսիրել:

Ա՛խ, սրտի տեղ եթե լիներ լեզուն,
Որ խոստացավ հանգիստ քեզ շփրել:
Հասկանո՞ւմ ես, թե ես ինչ եմ ասում,
Հասկանո՞ւմ ես արդյոք, քեզ... չսիրե՛լ...

Ժողովից հետո մարդիկ դուրս են գալիս շատ հանգիստ խղճով. չէ՞ որ ամեն ինչ արվեց հանուն բարոյականության, հանուն գրված ու չգրված բոլոր օրենքների, նրանք սակայն չգիտակցեցին իմիայն մի բան,

Որ բոլոր օրենքներից բացի
Կա մի օրենք ևս և շատ խելոք.
Բոլոր օրենքների ո՛չ թե տառն են կարդում,
Այլ էությունը լուկ...

Այս պոեմը խոսք է հենց այդ էության մասին, անսքող ու բարձրաձայն ասված խոսքը:

Սիրո՛ հավերժական թեմայի նոր կողմեր են բացահայտված Պ. Սևակի «նահանջ երգով» պոեմում:

Ես շատ էի նման այն հեքիաթի կատվին,
Որ երբ մինչև անգամ չքանում է աչքից՝
Վառ ժպիտը նրա դեռ մնում է երկար...

«նահանջ երգով» պոեմի առաջին իսկ եռատողով բանաստեղծը ցավով ազդարարում է, որ անգլիական իմաստուն հեքիաթի Զիշիրյան կատվի իր աններելի լավատեսությունն արդեն վտանգել է իր իսկ սերը: Իսկ այդ սերը որքան աղնիվ է եղել, եղել է նույնքան և կույր: Սիրած կնոջ կերպարը նրան պատկերվել է ոչ բնավ այնպես, ինչպիսին նա է իրականում: Իր հոգու աչքերով է բանաստեղծը դիտել նրան, պատկերել նրան այնպես, ինչպես ինքն է ցանկացել, անգամ նրա գեղեցկության «գյուտարարն» է դարձել, նրան նոր կերպ տվել ըստ իր սիրո և հեռվից հեռու դիտելով սքանչացել իր իսկ ստեղծածով:

Իրոք այդ ես էի, որ քեզ ստեղծեցի,
Այդ ես էի, որ քեզ կյանք տվեցի կյանքում
Նվ վաղ թե ուշ պիտի դու ապրես
Քո առանձին կյանքով:

Իսկ այդ «առանձին կյանքը» բանաստեղծի հուսախաբությունն է, նրա անպատասխան սիրո մղձավանջը: Սիրած աղջիկը բոլորովին էլ այն չէ, ինչպես նրան մտովի կերտել է պոեմի հերոսը: Իսկ այդ հուսախաբությունը խլում է նրանից ամենաթանկ բանը՝ հավատը: Եվ «հավատաքաղց» ու «հավատի ծարավ» սիրահարը պատրաստ է հիմա

Սեր վաճառել նույնիսկ,
Միայն թի տան հավատ:

Սեր վաճառել նա չի կարող, որովհետև միմիայն գնորդ է սիրո, իսկ հավատի կարիք՝ իրոք որ անսահման ունի: Մեծ սիրո ու կործանվող հավատի բախումից էլ ծնվում է այս պոեմի ներքին հակադրությունը, որը և ստիպում է բանաստեղծին նահանջել, նահանջել՝

Զսպասելով
Քո ապստամբ խոսքին
Նվ ակնարկին անգամ:

Ու հեշտ չի կատարվում այդ նահանջը, կամ կարող էր հեշտ կատարվել, երբ

Քո սերը... գիտե՛ս
— նա ինձ համար նույնն էր,
Ինչ «Ամեն»-ը խորունկ հավատացյալ մեկի:

Ու այդ ամեն սերը կերպար է դառնում պոեմում, որի շուրջն էլ մտորում, խորհրդածում է բանաստեղծը: Անպատասխան սերը տակն ու վրա է արել նրա հոգում ամեն ինչ: Հերոսը չի էլ մեղադրում սիրած աղջկան: Զէ՞ որ ոչինչ չի կատարվել անբնական: Իր պես նա էլ իր աշխարհն ունի, իր սերը: Պարզությամբ այդ «անուղղելի» ու «հիմար» սիրտն է, որ «հակառակ զխի» և «հակառակ կամքի» շարունակում է սիրել:

Չարձադանքված սիրո նվնվոցը չէ, որ հնչում է պոեմում: Սիրած աղջկա հետ երբեմն մտերմության հուշն էլ շատ թանկ է նրա համար: Բանաստեղծը ցավում է այն բանի համար միայն, որ աշխարհում դեռ կան «վրիպակ» սերեր,

Որին շտկում չկա,
Ու դրանից
Աղճատվում է կյանքի իմաստը ողջ...

Սիրո կերպարը պոեմում անշափ բաբախուն է, կենդանի: Այնքան մեծ է այդ զգացմունքի ուժը որ քնարական հերոսը գիտակցելով ու կամենալով էլ չի կարողանում վանել իրենից: Ինքնասիրությունն ու վիրավորանքն էլ այստեղ հեղինակազրկվում են, և ի՞նչ է մնում պոեմի սիրահար հերոսին, եթե ոչ այդպես տառապելով սպասել իր մազերի ճերմակելուն:

Եվ ըստ մի քիչ ճերմակ՝
Ու կազատվեմ՝ քեզնից

Սիրայն այդ ժամանակ նա կարող է իրեն շտրելու «հանկարծահաս գյուտին» նայել այնպես, ինչպես նայում են վառողի գյուտին:

Ահավոր էր՝ երեկ
Սովորական այսօր...

Ու որքա՞ն սարսափելի է այդ սովորականը, որքա՞ն գերադասելի «ահավորն» այդ «սովորականից»: Դրա համար էլ բանաստեղծը ամբողջ հոգով փառաբանում է անգամ սիրո տառապանքը.

Օրհնյա՛լ լինի նաև տված տառապանքդ,
Որից ոչ թե մեռնում, այլ ծնվում են կրկին:

Ու նա չի նահանջում՝ նահանջելու համար, բնավ, դա նահանջ է երգով, մի երգ, որի խոսքերն են. «Մի ընդօրինակիր, օրինակ տուր սիրո»: Ու այդ նահանջը մի նոր սիրո գալուստ է ազդարարում.

Նորահաստատ մի սեր և նորաքանդ մի սեր,—
Սա մի պատմություն է, որ չի հնանալու,
Ինչպես երբեք չեն հնանա
Մահն ու ծնունդ նոր:

Բայց շնայած հեղինակի նախազգուշացումներին, նրա այս պատմությունն արդեն հնացած է համարում և գտնում, որ 600-ից ավելի տողանոց պոեմում բանաստեղծն ասել է այն, ինչ Ավ. Իսահակյանը շատ լավ ասել է մեկ տողով՝

Սիրեցի յարս տարան...

Իսկապես, ի՞նչ կապ ունի այս պոեմը «Սիրեցի յարս տարան»-ի հետ. ո՞վ տարավ, ո՞ր տարան: Իսկ եթե տարան, էլ ինչո՞ւ է պոեմը կոչվում «նահանջ երգով», էլ ինչո՞ւ է հեղինակը օրհներգում ոչ միայն սիրո վայելքները, այլև սիրած աղջկա հեռացումը, «որ իբրև նոր գալուստ» պետք է արձագանքվի

Թեկուզ ինձնից հեռու,
Ոչ ինձ համար:

Բայց այդ «թեկուզ ինձնից հեռու, ոչ ինձ համար»-ը բնավ էլ չի նշանակում, թե տարել են նրա «յարը»՝ Նա Ավ. Իսահակյանի «յարն» էլ չէ, որին կարողանային տանել: Պոեմի քնարական հերոսուհին իր աշխարհն ունեցող, իր սերը որոնող մեկն է, և սերը պոեմի հերոսը չէ: Ահա բոլորը: Այստեղից էլ ծնվում է մեծ սիրո մեծ հուսախաբությունը: Եվ խորապես ապրված այս հուսախաբության մասին է այս պոեմի խոսքը, որ և ամենասովորականն է, ամենամարդկայինը: Հենց այս սովորականն ու մարդկայինն էլ թույլ չեն տվել բանաստեղծին իր իսկ հոգու ցավերի տխուր ողբերգակը դառնալ: Ընդհակառակը, հոգեկան տանջանքների միջոցով էլ նա սորից իմաստավորում է կյանքը, հաստատում մարդկային մեծ զգացմունքների հարատևությունը:

4 Ռ. Հովհաննիսյան, Մարդը փի մեջ, «Սովետական Հայաստան» հանդես, 1964, № 7, էջ 26—29:

Մերժված ես չեմ եղել
 Ու չեմ լինի երբեք
 Եվ ինձ չսիրելը անհնար է նույնքան...
 Ես լուկ նահանջում եմ,
 Որ սկսվեմ նորից...

Նորից վերսկսվելու, ընդմիջող վերսկսվելու կենսահաստատ փիլիսոփայությունն էլ այս պոեմի ռահագնացող արձագանքն է»:

Աննկատ չի մնում, սակայն, որ բանաստեղծը մինչև վերջ տրվելով իր ոգևորությանը, շատ է ծավալվել: Կան ամբողջական հատվածներ, որոնք պարզապես ավելորդ են, քանի որ ոչ միայն ոչինչ չեն ավելացնում պոեմին, այլև :սսվածը կրկնում են ավելի վատ ձևով: (Այդպիսիք են հասկապես պոեմի 11, 14, 18 և այլ հատվածները):

Պ. Սևակը իր պոեմի հատվածներից յուրաքանչյուրի համար ընտրել է տվյալ պահի տրամադրությունն արտահայտող լեզվաոճական մի հնարանք և շաղախել այն իր տաքշող արվեստի ահագնացող կրթով:

Ինքն իր հետ խորհրդածող բանաստեղծի բարձրաձայն մտորումները, հասկանալի է, թե որքան կարող էին միօրինակ լինել, եթե Սևակը չդիմեր իր փայլատակող խոսքի ու հույզերի դրսևորման բազմազանությանը: Նրբեմն այնպիսի անուովոր համեմատությունների է դիմում հեղինակը (սերը՝ լարախաղացի ձող, լուսինը՝ հուլանդական պանրի նման դեղնած, կնոջ սլացիկությունը՝ սնդիկի սյան նման ուղիղ ու ջինջ, շենքի քիվ-ճակատին նստած ձյունը՝ վիրակապ և այլն), հին երևույթներին այնպիսի նոր ու զարմանալի պատկերացումներ տալիս, նույնիսկ «կոպիտ» ու «արտաուց» թվացող պատկերների միջոցով, այնպիսի բարախուն տրամադրություն ստեղծում, որ մոռանում ես երևույթների արտաքին էությունը և միայն այդ երևույթների իմաստը զգում խորապես:

Ինչպես բանաստեղծության մեջ, այնպես էլ լայն կտավի գործերում Սևակը հավատարիմ է մնացել իր «հավատո հանգանակին»՝ հմուտ դարբնությունը գերադասելով ոսկերչությունից:

Ստեղծագործական այդ սկզբունքին հետևելով բանաստեղծը, հավատացած ենք, նորանոր գործերով դեռևս կհարստացնի հայկական պոեզիան: